**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**11.02.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-1 գնման պայմանագրի**

ք. Երևան «22» « 05 » 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼՈՒՔ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերությքան տնօրեն Տ. Առաքելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 11.02.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Երևան քաղաքի մսուր-մանկապարտեզների վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել **33839760** (երեսուներեք միլիոն ութ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԼՈՒՔ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտի փ. 1 | ք. Երևան, Միկոյան 13շ., 42բն. |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900012002136 | ՀՀ 1570070539350100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00921258 |
| Վ. Պապիկյան ________ (ստորագրություն) Կ.Տ | Տ. Առաքելյան ________ (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված թիվ 1
11.02.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-1 գնման պայմանագրի
«22» « 05 » 2026թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/950 | Երևան քաղաքի թիվ 33 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքներ | - | - | - | - | 8799960 | 8799960 | 8799960 | 8799960 | 8799960 | 8799960 | 8799960 | 8799960 | 8799960 |
| 3 | 71241200/953 | Երևան քաղաքի թիվ 101 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքներ | - | - | - | - | 7500000 | 7500000 | 7500000 | 7500000 | 7500000 | 7500000 | 7500000 | 7500000 | 7500000 |
| 4 | 71241200/951 | Երևան քաղաքի թիվ 108 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքներ | - | - | - | - | 5299920 | 5299920 | 5299920 | 5299920 | 5299920 | 5299920 | 5299920 | 5299920 | 5299920 |
| 5 | 71241200/949 | Երևան քաղաքի թիվ 118 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքներ | - | - | - | - | 9549960 | 9549960 | 9549960 | 9549960 | 9549960 | 9549960 | 9549960 | 9549960 | 9549960 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 71241200/948 | Երևան քաղաքի թիվ 129 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքներ | - | - | - | - | 2689920 | 2689920 | 2689920 | 2689920 | 2689920 | 2689920 | 2689920 | 2689920 | 2689920 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012002136
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԼՈՒՔ» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 13շ., 42բն.
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570070539350100
ՀՎՀՀ 00921258

Տ. Առաքելյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

14.05.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.15391.26

*Բենեֆիցիար՝*
*Երևանի քաղաքապետարան*

**ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.15391.26**
**(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «Լուք» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 11.02.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-1 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 3,500,000.00 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 23 դեկտեմբերի 2026թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ anna.darbinyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝**
**Սուրեն Քոչարյան**



Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am